

**CONTRACT N 2.48**  
**Modernization of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre**

Yerevan  
 " 06 " 04 2018

"ARMATS" CJSC, on behalf of the company General Director A.Gasparyan (hereinafter Customer), acting on the basis of "ARMATS" CJSC charter, on the one hand and "S.I.T.T.I S.p.A." on behalf of Managing Director Massimo Crovato (hereinafter Performer), acting on the basis of Company charter, on the other hand, concluded the contract on the following:

**1. SUBJECT OF THE CONTRACT**

1.1 The Customer shall assign and the Performer shall assume responsibility to provide Voice Equipment Repair and Maintenance services: modernization services of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre (hereinafter Service) according to Technical Characteristics-Procurement Schedule under Appendix N 1 hereof which is an integral part of the contract (hereinafter Contract).

1.2 The Service shall be provided in compliance with the Technical Characteristics-Procurement Schedule under Appendix N1 hereof and within the defined period.

**2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES**

2.1 The Customer shall have the right to:

2.1.1 check the process and quality of the Service provided by the Performer at any time without interfering with the activity of the Performer.

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.49**  
**«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացում**

ք. Երևան  
 « 06 » 04 2018 թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և S.I.T.T.I S.p.A.-ն, ի դեմս գործադիր տնօրեն Մասսիմո Քրովատտի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ձայնային տեխնիկայի վերանորոգման և պահպանման ծառայությունների՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ  
 Երևան, 49

<p>2.1.2 If the Service has not been provided in compliance with the Technical Characteristics-Procurement Schedule under Appendix N1 of the Contract:</p> <p>a) refuse to accept the Service by defining at his discretion a reasonable period for the replacement of the improper Service with Service complying with the Contract free of charge and require Performer to pay the fine under point 5.2 as well as the penalty under point 5.3 of the Contract.</p> <p>b) refuse to perform the Contract and require the Performer to return the amount paid for the Service and pay the fine under point 5.2 of the Contract.</p>	<p>2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.</p> <p>ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման որջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.</p> <p>բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.</p>
<p>2.1.3 Unilaterally terminate the Contract if the Performer has substantially violated the Contract. Breach of the Contract by the Performer is significant if:</p> <p>a) the Service provided under the Contract does not meet the requirements set out in Appendix N1 of the Contract,</p> <p>b) the time limit of the Service provision has been violated.</p>	<p>2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</p> <p>ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 Հավելվածով սահմանված պահանջներին,</p> <p>բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:</p>
<p><b>2.2 The Customer shall be obliged to:</b></p>	<p><b>2.2 Պատվիրատուն պարտավոր է՝</b></p>
<p>2.2.1 Consider and accept the outcome of the Service complying with the Technical Characteristics-Procurement Schedule and if any discrepancies are discovered during the acceptance of the Service results, immediately notify the Performer about it in writing.</p>	<p>2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:</p>
<p>2.2.2 If the outcome of the Service is accepted, pay the Performer the payable amounts and if the time limit is breached, also pay the penalty set out in point 5.5 of the Contract.</p>	<p>2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p>
<p><b>2.3 The Performer shall have the right to:</b></p> <p>2.3.1. require the Customer to pay him the payable amounts and if the time limit,</p>	<p><b>2.3 Կատարողն իրավունք ունի՝</b></p> <p>2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի</p>

defined in point 4.2 of the Contract, is breached by the Customer also require the Customer to pay the penalty under point 5.5 of the Contract.

**2.4 The Performer shall be obliged to:**

2.4.1 provide the Service according to the terms and conditions under Appendix N 1 of the Contract and the current legislation.

2.4.2 in the cases covered by the Contract pay the fine and penalty set out in points 5.2 and 5.3.

2.4.3 in case of starting liquidation or bankruptcy process during the Contract performance period, notify the Customer in writing in advance.

**3. DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICE**

3.1 Site Acceptance Tests (SAT) are carried out with the participation of the specialists of the Parties, the SAT Certificate is made up.

3.2 The Customer and the Performer shall bilaterally sign a delivery-acceptance protocol on the outcome of the provided Service. The fact of delivering the outcome of the Service to the Customer shall be established by a mutually confirmed document with the indication of the date the document has been drawn up.

The Performer till and including the Service provision deadline date shall submit to the Customer the document certifying the actual delivery of the provided Service to the Customer (Appendix N 3.1) signed on his behalf and also a delivery-acceptance protocol (Appendix N 3) through Armeps system of electronic procurements (guidelines are set up in "Electronic Purchases" section at [www.procurement.am](http://www.procurement.am)). Moreover, the

խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Կողմերի մասնագետների մասնակցությամբ իրականացվում են տեղային ստուգումներ, կազմվում է տեղային ստուգումների Վկայական (այսուհետ՝ SAT)։

3.2 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման

<p>Performer shall approve the delivery-acceptance protocol with an electronic digital signature completing only the relevant fields (the procedure for completing is set up in Legislation Finance Minister Orders section at <a href="http://www.procurement.am">www.procurement.am</a>).</p> <p>3.3 If the provided Service complies with the Contract terms and conditions, the Customer shall sign and submit the delivery-acceptance protocol and the positive opinion on the contract implementation results to the Performer through the electronic procurement <b>armeps</b> system within <u>5</u> working days following the receipt of the documents prescribed by point 3.1 of the Contract.</p> <p>3.4 If the provided Service or a part thereof does not comply with the Contract terms and conditions, the Customer shall not sign the delivery-acceptance protocol and return the protocol and the negative opinion on the contract implementation results to the Performer through the electronic procurement <b>armeps</b> system within the time limits prescribed by point 3.2 of the Contract. For applying the conditions provided for by this point the Customer shall take measures foreseen by the Contract for such cases to settle the issue and apply responsibility measures under the Contract towards the Performer.</p> <p>3.5 If the Customer does not accept or does not refuse to accept the Contract result within the period defined by point 3.3 of the Contract, the result is considered as accepted and the Customer shall submit the delivery-acceptance protocol confirmed thereby to the Performer through the electronic procurement system on the following day after the deadline date defined by point 3.3 of the Contract.</p>	<p>արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր սովյալներին (լրացման կարգը տեղադրված է <a href="http://www.procurement.am">www.procurement.am</a> հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):</p> <p>3.3 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>5</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների <b>armeps</b> համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:</p> <p>3.4 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների <b>armeps</b> համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:</p> <p>3.5 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:</p>
--	--

<p>3.6 The Equipment shall be delivered up to Customer's store and if the Performer is a non-resident the delivery of the Equipment shall be carried out according to the provisions of "Incoterms 2010 DAT" of the Chamber of International Commerce up to Republic of Armenia, "Zvartnots" airport customs terminal. Moreover, the customs clearance of the equipment shall be carried out by the Customer and delivered to the Performer at the following address: Republic of Armenia, Yerevan, I. Gasparyan 33,"ARMATS" CJSC for the purpose of installation</p>	<p>3.6 Սարքավորումների մատակարարումը իրականացվում է Պատվիրատու պահեստ, իսկ ոչ ռեզիդենտ մատակարարի դեպքում՝ Սարքավորումները մատակարարվում են միջազգային առևտրի պալատի կողմից սահմանված «Incoterm 2010, DAT» պայմաններով, Հայաստանի Հանրապետություն, մինչև «Զվարթնոց» օդանավակայան մաքսային տերմինալ, ընդ որում Սարքավորումների մաքսազերծումն իրականացնում է Պատվիրատուն և հանձնում է Կատարողին Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Ի.Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ հասցեում՝ տեղադրման նպատակով:</p>
<p>3.7 The duration of the Equipment and works warranty period starts immediately after signing the delivery-acceptance protocol and endures 365 days.</p>	<p>3.7 Սարքավորումների և աշխատանքների երաշխիքային ժամկետի հաշվարկը սկսվում է ընդունման-հանձման արձանագրության ստորագրումից անմիջապես հետո և կազմում է 365 օրացուցային օր:</p>
<p>3.8 If within the warranty period any deficiencies and defects are revealed in the supplied software, the Performer, consulting with the Customer, in a reasonable period, however, no later than within 30 working days, rectifies the deficiencies of at his own expense.</p>	<p>3.8 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում կհայտնաբերվեն ծրագրային ապահովման թերություններ և անսարքություններ, Կատարողը խորհրդակցելով Պատվիրատուի հետ, ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ քան 30 աշխատանքային օրվա ընթացքում, իր հաշվին վերացնում է ծրագրային ապահովման անսարքությունները:</p>
<p>3.9 If the Customer sends a request till December 31, 2028, the Performer shall provide post-warranty service for the upgraded system about which a contract is to be signed. The post-warranty service contract shall cover the software maintenance and updates of Multifono M800 IP voice communication system installed in ARMATS CJSC ATC Centre, as well as the repair and replacement of the system equipment and its components.</p>	<p>3.9 Մինչև 2028թ. դեկտեմբերի 31-ը Պատվիրատուի կողմից դիմելու դեպքում Կատարողի կողմից իրականացվում է արդիականացված համակարգի հետերաշխիքային սպասարկում, որի վերաբերյալ կնքվում է պայմանագիր: Հետերաշխիքային սպասարկման պայմանագրում պետք է ընդգրկվի «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնում տեղադրված ձայնային կապի Multifono M800 IP համակարգի ծրագրային ապահովման վարումն ու թարմացումը, ինչպես նաև նշված համակարգի սարքավորումների և նրա բաղադրամասերի վերանորոգումն ու փոխարինումը:</p>
<p>3.10 The Contract implementation period starts from the date of signing the contract until August 31, 2018 inclusive.</p>	<p>3.10 Պայմանագրի գործողության ժամկետը սկսվում է ստորագրման պահից և գործում է մինչև 2018թ. օգոստոսի 31 ներառյալ:</p>

**4. CONTRACT PRICE**

4.1 The total price of the Contract Service provided by the Performer is 10.800,00 (ten thousand eight hundred) Euros.

The price includes all the expenses incurred by the Performer, as well as the taxes, duties and other mandatory payments according to the RA legislation.

The Service provision price is fixed and the Performer shall not have the right to require to increase and the Customer shall not have the right to require to reduce the price.

4.2 The Customer shall make a noncash payment in Euros for the provided Service through transferring the financial resources to the Performer's account number. The transfer of the financial resources shall be carried out based on the delivery-acceptance protocol in the amount and months defined by the payment schedule (under Appendix N2) of the Contract.

**5. RESPONSIBILITIES OF THE PARTIES**

5.1 The Performer bears responsibility for the Service provision according to the Contract requirements.

5.2 For each case if the Service is not provided in compliance with the Technical Characteristics under Appendix N 1 of the Contract, the Performer shall pay fine amounting to 0,5%(zero-point-five) percent of the price mentioned in Appendix 4.1 of the Contract.

5.3 If the Service provision period under the Contract is breached, for each delayed day the Performer shall pay penalty amounting to 0,05% (zero-point-zero-five) percent of the Service price calculated towards the price of non-performed part of the Service.

5.4 The penalties and fines defined in points 5.2 and 5.3 of the Contract are calculated and transferred together with the sums payable to the Performer in the result of the Service provision.

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10.800,00 (տասը հազար ութ հարյուր) եվրո.

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է եվրոյով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N2) նախատեսված չափերով և ամիսներին:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՍՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 Հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 If the Customer breaches the time limit under point 4.2 of the Contract, the Customer shall pay a penalty calculated for each day of the delay, however, in the amount of 0,05 (zero-point-zero-five) percent of the unpaid amount.

5.6 In the cases not covered by the Contract if the Parties fail to perform or properly perform their obligations, they bear responsibility in the order determined by the RA legislation.

5.7 The payment of penalties and (or) fines does not release the Parties from the performance of their contractual obligations.

#### 6. FORCE MAJEURE

The Parties are exempted from liability for the full or partial non-performance of their obligations under this Contract or Agreements signed on the basis of the Contract if it happens due to a force majeure which occurred after the Contract signature and which the Parties could not predict or prevent.

Such events are earthquakes, floods, fires, war, announcement of military and emergency situations, political unrest, strikes, communication failures, acts of government bodies, etc., that lead to non-fulfillment of their obligations under this Contract.

If force-majeure endures more than 3 (three) months, either Party shall have the right to terminate the Contract informing the other Party about it in advance.

#### 7. MISCELLANEOUS

7.1 This Contract enters into force from the moment of its signature by the Parties and

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի

<p>is valid until the Parties have completely fulfilled their contractual obligations.</p>	<p>ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</p>
<p>7.2 The payment liability of the Party arising from the Contract cannot be terminated by offsetting a counter liability arising from other contract without the written and sealed agreement of the Parties. The right of claim arisen from the Contract cannot be transferred to other entity without the written consent of the debtor Party.</p>	<p>7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:</p>
<p>7.3 If in the result of a control or oversight or complaints review, carried out in the order foreseen by the Law directed to the fulfilment of the legislation requirements, it is registered that during the procurement process, before the Contract conclusion, the Performer has submitted falsified documents (information and data) or the decision about the Performer as a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, after the discovery of such data the Customer shall have the right to terminate the Contract unilaterally, if the registered infringements, discovered before the Contract conclusion, according to the procurement legislation of the Republic of Armenia would have become a basis for not concluding the Contract. In addition, the Customer does not bear any risk of the Performer's losses or lost benefit due to the unilateral termination of the Contract and the Performer shall compensate for the Customer's losses occurred through the Performer's fault according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia and to the extent in respect of which the Contract has been terminated.</p>	<p>7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:</p>
<p>7.4 All the disputes arising from the Contract shall be subject to examination in the courts of the Republic of Armenia.</p>	<p>7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:</p>
<p>7.5 Any additions and amendments to the</p>	<p>7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ</p>

<p>Contract can be made only by the mutual consent of the Parties by signing an agreement, which will become an integral part of the Contract.</p> <p>It is prohibited to make such amendments in the Contract, and if the Contract price is factor based, in each subsequent agreement attached to the contract, which will lead to the artificial change of the procurement Service scope or Service unit price or Contract price.</p> <p>The government of the Republic of Armenia determines the cases when the Contract is amended owing to the influence of the factors beyond the control of the Contract Parties.</p> <p>7.6 The Service provision period may be extended before the expiry of the deadline if there is a proposal by the Performer, on condition that the Customer still has the need for the procurement subject. However, the Service provision period may be extended once and for up to 30 calendar days, but no longer than the time limit defined by the Contract.</p> <p>7.7 If the Contract is implemented properly, the benefits (savings) or the losses of the Parties (Performer or Customer) are the benefit or loss of that Party.</p> <p>The obligations of the Contract Parties towards the third entities including other contracts signed by the Performer within the frame of the Contract implementation and the liabilities arising from them are out of the Contract regulation framework and cannot have an influence on the acceptance of the Contract implementation result. The relations related to the implementation of such contracts and the obligations arising from them are regulated by the norms related to the regulation of such contracts relations and the Performer bears responsibility for them.</p>	<p>կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:</p> <p>Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:</p> <p>Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:</p> <p>7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:</p> <p>7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:</p> <p>Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:</p>
---	---

7.8 This Contract may not be amended due to the partial non fulfillment of the obligations by the Parties or completely terminated by the mutual consent of the Parties, with the exception of cases when the allocated financial resources are reduced, necessary for the procurement of the subject matter hereof, according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia. In addition, the mutual consent of the Parties for the partial non fulfillment of the obligations or complete termination thereof is necessary to obtain before the reduction of the financial resources necessary for that procurement according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia.

7.9 If the Performer fails to fulfill or improperly fulfills the Contract obligations, the Customer shall publish a notification about the unilateral termination of the Contract or any part thereof in "Notifications on unilateral termination of contracts" section at [www.procurement.am](http://www.procurement.am) indicating the publication date. The Performer shall be considered to be duly notified of the unilateral termination of the Contract on the day following the day of publication of the notification as prescribed by this point.

7.10 All the disputes arising from the Contract are settled through negotiations. In case of failing to reach an agreement, the disputes are settled in the RA courts.

7.11 The Contract is comprised of \_\_11\_\_ pages and is concluded in two copies and bilingual originals in Armenian and in English languages. In case of discrepancies between the Armenian and English versions, the discrepancy is interpreted for the benefit of the Performer. Appendixes N1, N2, N3 and N3.1 attached to the Contract are an integral part of the Contract, each Party will be given one copy of the Contract.

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է \_11\_ էջից, կնքվում է երկու օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև տարաձայնություններ ծագելու դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Կատարողի: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 The Contract is subject to the law of the Republic of Armenia.

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8 . Legal addresses, bank requisites and signatures of the Parties**

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**CUSTOMER**

“ARMATS” CJSC  
Yerevan-0042,  
I.Gasparyan 33  
Taxpayer identification number 01216144  
A/N 1930000346890104  
“Converse bank” CJSC

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ  
ք.Երևան-0042,  
Բ.Գասպարյան 33  
h/h 1930000346890104,  
Կոնվերս բանկ ՓԲԸ  
ՀՎՀՀ 01216144

**PERFORMER**


S.I.T.T.I. S.p.A.  
Via Cadorna 69/73,  
20090 Vimodrone Mi Italy  
Taxpayer identification number  
IT00702910159  
A/N IT 37 C 02008 01622 000000667486,  
UNICREDIT SpA  
**SWIFT : UNCRITMM**

**ԿԱՏԱՐՈՂ**

S.I.T.T.I. S.p.A.  
Վիա Կարդոնա 69/73,  
20090 Վիմոդրոնե Մի Իտալիա  
ՀՎՀՀ IT00702910159  
A/N IT 37 C 02008 01622 000000667486,  
UNICREDIT SpA  
**SWIFT : UNCRITMM**

**By Customer**

Artur Gasparyan  
General Director  
of “ARMATS” CJSC



signature / ստորագրություն


Stamp / Կ.Տ.

**Պատվիրատուի կողմից**

Արթուր  
Գասպարյան  
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն

**By Performer**

Massimo Crovato  
Managing Director  
of S.I.T.T.I. S.p.A.



signature / ստորագրություն

Stamp / Կ.Տ.

**Կատարողի Կողմից**

Մասսիմո Բրովատո  
Գործադիր տնօրեն  
S.I.T.T.I. S.p.A.

Appendix 1

Contract N 2.49

Modernization of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre

Հավելված 1

Պայմանագիր N 2.49

«Հայտերոնավիզացիա» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացում

TECHNICAL CHARACTERISTICS-PROCUREMENT SCHEDULE

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒՅՑ

Service Ծառայություն							
Number of the lot provided by the invitation	Code indicated in the procurement plan according to CPV classification	Technical characteristics* Տեխնիկական բնութագիրը*	Measure ment unit Չափման միավորը	Total price (in euro) Ընդհանուր գինը/Եվրո	Total volume Ընդհանուր քանակը	Implementation Մասնագնան	
						Address Հասցեն	Period Ժամկետը
1	50341400	Modernization of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre «Հայտերոնավիզացիա» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացում	Euro	10,800,00	1	RA, Yerevan-0042, I.Gasparyan "ARMATS" CJSC ՀՀ, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33, «Հայտերոնավիզացիա» ՓԲԸ	From the moment the Contract enters into force to August 31, 2018 inclusive Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից սկսած 2018թ.օգոստոսի 31-ը ներառյալ
1	50341400		Եվրո	10,800,00	1		

CUSTOMER ԿՍԱՇՈՂ

"ARMATS" CJSC Yerevan-0042, I.Gasparyan 33  
Taxpayer identification number 01216144  
A/N 1930000346890104 "Converse bank" CJSC  
ՀՀ, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33,  
«Հայտերոնավիզացիա» ՓԲԸ, ՀՎՀՀ՝ 01216144,  
h/h 1930000346890104, Կոնվերս բանկ ՓԲԸ

PERFORMER ՊՍՎԻԴԱՏՈՂ

Via Cadorna 69/73, 20090 Vimodrone Mi Italy  
S.I.T.I. S.p.A. Taxpayer identification number IT00702910159  
A/N IT 37 C 02008 01622 000000667486, UNICREDIT SpA  
Վիա Կադորնա 69/73, 20090 Վիմոդրոնե Մի Իտալիա  
S.I.T.I. S.p.A., ՀՎՀՀ՝ IT00702910159  
A/N IT 37 C 02008 01622 000000667486, UNICREDIT SpA

By Customer Artur Gasparyan General Director of "ARMATS" CJSC	By Performer Massimo Crovato Managing Director of S.I.T.I. S.p.A.	Պատվիրատուի կողմից Արթուր Գասպարյան <<Հայտերոնավիզացիա» ՓԲԸ Գլխավոր տնօրեն	Կատարողի կողմից Մասսիմո Կրովատո Գործադիր տնօրեն S.I.T.I. S.p.A.
--	--	---	--

\*The full description of the technical characteristics is defined in Appendix 1.1

\* Տեխնիկական բնութագրի մանրամասն նկարագրությունը ներկայացված է 1.1 Հավելվածում

Modernization of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre

«Հայաէարնավիգացիա» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացում

<p><b>Technical specification</b></p>	<p><b>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</b></p>
<p>In order to improve the differentiation of simultaneous audio streams from one common loudspeaker in the VCCS system Multifono M800IP, produced by SITTI and installed in "ARMATS" CJSC "Yerevan" ATC centre, it is necessary to separate the main and monitoring frequencies radio channels, using additional loudspeakers (provided by ARMATS) at all CWP. Modernization of the voice communication system shall include the following activities:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Make appropriate changes to the system software to separate the corresponding channels;</li> <li>2. Perform necessary installation, adjustment and alignment works;</li> <li>3. Supply five Handset type MT.1135 and five Handset base type BM.1322;</li> <li>4. Physically integrate the loudspeakers into the system;</li> <li>5. Keep the structure of the output channels to be recorded</li> <li>6. After the update of CWPs and MMS the following activities are required:                     <ol style="list-style-type: none"> <li>a) check of Touch Screen keyboards at all CWPs of ATC voice communication system;</li> </ol> </li> </ol>	<p>«Հայաէարնավիգացիա» ՓԲԸ «Երևան» ՕԵԿ կենտրոնում տեղադրված SITTI ընկերության արտադրության ՕԵԿ ձայնային կապի Multifono M800 IP համակարգում մեկ ընդհանուր բարձրախոսից միաժամանակյա ձայնային հոսքերի տարբերակումը բարելավելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել տարանջատել հիմնական և ունկնդրվող ռադիոընդունիչների կապուղիները՝ օգտագործելով լրացուցիչ բարձրախոսներ (տրամադրվում է «Հայաէարնավիգացիա» ՓԲԸ- կողմից) համակարգի բոլոր աշխատանքային տեղերում: Ձայնային տեխնիկայի վերանորոգման և պահպանման ծառայությունները (ձայնային կապի համակարգի արդիականացումը) պետք է ընդգրկեն հետևյալը՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համակարգի ծրագրային ապահովման մեջ փոփոխության իրականացում՝ առանձնացնելու համար համապատասխան կապուղիները:</li> <li>2. Կատարել անհրաժեշտ մոնտաժման, համալարման և կարգաբերման աշխատանքներ:</li> <li>3. Մատակարարել 5-ական MT.1135 տիպի խոսափող և BM.1322 տիպի խոսափողի բազային հանգույց:</li> <li>4. Լրացուցիչ բարձրախոսները ֆիզիկապես ինտեգրել համակարգի մեջ:</li> <li>5. Պահպանել ձայնագրման ենթակա կապուղիների էլքերի կառուցվածքը:</li> <li>6. Աշխատանքային տեղերի և հեռահսկման ու հեռակառավարման համակարգի արդիականացման աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է՝                     <p>ա/ կատարել ՕԵԿ ձայնային կապի համակարգի բոլոր աշխատանքային տեղերի վահանակների ստուգում:</p> </li> </ol>

<p>b) check of all operational functions of telephone and radio channels circuits;</p> <p>c) check of the VCCS Supervisory system;</p> <p>d) check of the VCCS overall functionality;</p> <p>e) compile a report of the site intervention activities including the schematic changes.</p>	<p>բ/ ստուգել հեռախոսային և ռադիոկապուղիների աշխատանքային բոլոր գործառույթները:</p> <p>գ/ կատարել հեռահսկման և հեռակառավարման համակարգի ստուգում:</p> <p>դ/ կատարել ձայնային կապի համակարգի ամբողջական ստուգում:</p> <p>ե/ Կազմել իրականացված փոփոխությունների նկարագրություն՝ ներառելով սխեմատիկ փոփոխությունները:</p>
---	---

**CUSTOMER ԿԱՍԱՐՈՂ**

**PERFORMER ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

“ARMATS” CJSC Yerevan-0042, I.Gasparyan 33  
 Taxpayer identification number 01216144  
 A/N 1930000346890104 “Converse bank” CJSC


Via Cadorna 69/73, 20090 VIMODRONE MI ITALY  
 S.I.T.T.I. S.p.A.  
 Taxpayer identification number IT00702910159  
 A/N IT 37 C 02008 01622 000000667486, UNICREDIT SpA

ՀՀ, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33,  
 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ, ՀՎՀՀ՝ 01216144,  
 հ/հ 1930000346890104, Կոնվերս բանկ ՓԲԸ

Վիա Կարդոնա 69/73, 20090 Վիմոդրոնե Մի Իտալիա  
 S.I.T.T.I. S.p.A., ՀՎՀՀ՝ IT00702910159  
 A/N IT 37 C 02008 01622 000000667486, UNICREDIT SpA

**By Customer**  
 Artur Gasparyan  
 General Director  
 of “ARMATS” CJSC


signature / ստորագրություն  
 Stamp / Կ.Տ.



**Պատվիրատուի կողմից**  
 Արթուր Գասպարյան  
 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ  
 Գլխավոր տնօրեն

**By Performer**  
 Massimo Crovato  
 Managing Director  
 of S.I.T.T.I. S.p.A.

signature / ստորագրություն  
 Stamp / Կ.Տ.  
 S.I.T.T.I. S.p.A.  
 Vat. Code 00702910159  
 Massimo Crovato  
 Managing Director



**Կատարողի Կողմից**  
 Մասսիմո Բրովատո  
 Գործադիր տնօրեն  
 S.I.T.T.I. S.p.A.

Appendix 2

Contract N 275

Modernization of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre

Հավելված 2

Պայմանագիր N 275

«Հայալեռնակապակցի» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացում

PAYMENT SCHEDULE ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒՅՑ

Euro Եվրո

Service Ծառայություն		Payments shall be made in 2018	
		Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝	
Number of the lot provided by the invitation Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Code indicated in the procurement plan according to CPV classification Գնումների պլանով նախատեսված միջանցիկ նախատեսված ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Technical characteristics Տեխնիկական բնութագիրը	Until August 31, delivery-acceptance protocol +30 days Մինչև Օգոստոսի 31-ը, հանձնման-ընդունման արձանագրություն + 30 օր
1	50341400	Modernization of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre «Հայալեռնակապակցի» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացում	10.800,00
1	50341400		10.800,00
			<b>Total</b> Ընդամենը
			10.800,00
			10.800,00

CUSTOMER ԿՍԱՆՈՂ

«ARMATS» CJSC Yerevan-0042, I.Gasparyan 33  
Taxpayer identification number 01216144  
A/N 1930000346890104 "Converse bank" CJSC  
ՀՀ, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33,  
«Հայալեռնակապակցի» ՓԲԸ, ՀՎՀՀ՝ 01216144,  
h/h 1930000346890104, Կոնվերս բանկ ՓԲԸ

By Customer

Artur Gasparyan  
General Director  
of "ARMATS" CJSC  
  
By Performer  
Massimo Crovato  
Managing Director  
of S.I.T.I. S.p.A.

PERFORMER ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Via Cadorna 69/73, 20090 Vimodrone Mi Italy  
S.I.T.I. S.p.A. Taxpayer identification number IT00702910159  
A/N IT 37 C 02008 01622 000000667486, UNICREDIT SpA  
Վիա Կարդոնա 69/73, 20090 Վիմոդրոնե Մի Իտալիա  
S.I.T.I. S.p.A., ՀՎՀՀ՝ IT00702910159  
A/N IT 37 C 02008 01622 000000667486, UNICREDIT SpA

Պատվիրատուի կողմից

Արթուր Գասպարյան  
«Հայալեռնակապակցի» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն  
  
Կատարողի կողմից  
Մասսիմո Բրովատո  
Գործադիր տնօրեն  
S.I.T.I. S.p.A.



signature / ստորագրություն  
Stamp / Կ.Տ.  
  
S.I.T.I. S.p.A.  
signature / ստորագրություն  
Stamp / Կ.Տ. 00702910159  
Massimo Crovato  
Managing Director  
of S.I.T.I. S.p.A.




Provided Services				Մատուցված ծառայությունների	
Name Անվանումը	Brief description of the Technical Specification տեխնիկական բնութագրի համառոտ շարաբերանը	Quantity Indicator		Performance period	
		քանակական ցուցանիշը	According to Contract Procurement Schedule ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Actual փաստացի	կատարման ժամկետը
		According to Contract Procurement Schedule ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Actual փաստացի	According to Contract Procurement Schedule ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Actual փաստացի
				Payable sum (Euro) վճարման ենթակա գումարը /եվրո/	Payment period (according to Contract Payment Schedule) վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
N					

**The invoice and the positive opinion, based on which the mentioned protocol has been approved bilaterally, shall be an integral part of the protocol and attached thereto.**

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար էինք հանդիսացած հաշիվ սպյանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

The Service is provided by  
Ծառայությունը հանձնեց

  
signature / ստորագրություն

**S.I.T.I.S.P.A.**

Vat Code 00702910159

**Messineo**  
name, surname / անուն, ազգանուն  
Managing Director

st. Կ.S.

The Service is accepted by  
Ծառայությունն ընդունեց

signature / ստորագրություն

name, surname / անուն, ազգանուն

st. Կ.S.

Appendix 3.1

Contract N\_\_\_\_\_

Modernization of voice communication system of "ARMATS" CJSC ATC Centre

Հավելված 3.1

Պայմանագիր N\_\_\_\_\_

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ՕԵԿ կենտրոնի ձայնային կապի համակարգի արդիականացում

DOCUMENT N

Certifying the Actual Delivery of the Contract Result to the Customer

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Service Ծառայության		
Name Անվանումը	Measurement Unit Չափման միավորը	Volume (actual) Քանակը (փաստացի)

This document is drawn up in 2 copies; each Party will be given one copy.

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

PARTIES

ԿՈՂՄԵՐԸ

Delivered by

Հանձնեց

\_\_\_\_\_  
signature \ ստորագրություն

\_\_\_\_\_  
name, surname \ անուն, ազգանուն

Accepted by (Bid Projecting Representative)

Ընդունեց (Հայտը նախագծած ներկայացուցիչ)

\_\_\_\_\_  
signature / տորագրություն

\_\_\_\_\_  
name, surname \ անուն, ազգանուն